Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ

Պատասխաններ 11-րդ դասարան

1.Հանձին կենդանի բնության՝ մարդուն ուղեկցում է իմաստուն, բարի մի ուսուցիչ, **որ,** ամեն պահի նրա կողքին լինելով, տարիների ընթացքում սովորեցնում է, ուղղորդում:

Ասում են՝ նավորդները **համոզված են**՝ երբ ճայերը կտրուկ դադարեցնում են իրենց թռիչքն ու անհանգիստ ոստոստում ծովափին, ուրեմն **ուր որ է** ահեղամռունչ փոթորիկ է սկսվելու: Իսկ ծիծեռնակների բարձրաթռիչ սլացքը նշան է արևոտ ու պայծառ **եղանակի**: Հայտնի է, որ մինչև կեսգիշեր տքնող ժրաջան մրջյունները, նախազգալով վերահաս աղետը, շտապ փակում են իրենց բների մուտքերը: **Ըստ ականատեսների՝** հանքափորները դեղձանիկներին իրենց հետ հանքախորշ են իջեցնում. պարզվել է՝ վերջիններս, հոտի նկատմամբ զգայուն լինելով, իրենց բարձր գեղգեղանքով տեղեկացնում են վտանգավոր գազերի առկայության մասին: Ժամանակն է հիշելու նաև հոտառու օձաձկներին, որոնք ջրում ակնթարթորեն զգում են ալկոհոլի անգամ նվազագույն քանակությունը, **ինչին** արձագանքում են անհանգիստ խայտանքով: Վարժեցրած շներն էլ ահա օգնում են երկրաբաններին. ընդերքում՝ նույնիսկ յոթ մետր **իջվածքում,** նրանց հաջողվում է հայտնաբերել **ծծմբարջասպի** (ծծմբարջասպը նույն ծծմբապղինձն է)՝ օգտակար այդ հանածոյի ակունքները:

2.Հանձինս-հանձին,
կողքը-կողքին,
ծովափում-ծովափին,
շտապ կերպով-շտապ,
վերահասու- վերահաս,
ժամանակն է հիշել- հիշելու
յոթը- յոթ,

3. որ-հարաբեր. դերանուն, ենթակա, համոզված են-բաղ. ստորոգյալ, ուր որ է-մակբայ, ժամանակի պարագա, եղանակի-գոյական, հատկացուցիչ, ըստ ականատեսների-կապային բառակապակց.(կապ+գոյ.), հիմունքի պարագա, ինչին-հարաբերական դեր., հանգման խնդ. իջվածքում- գոյ. բացահայտիչ, ծծմբարջասպի- գոյ. հատկացուցիչ

4. որ- հար. դերանուն, շաղկապ, իսկ- համ. շաղկապ, վերաբերական, մինչև- կապ, շաղկապ, էլ- մակբայ, շաղկապ, վերաբերական, անգամ- կապ, վերաբերական, ածական

5. համոզված է-հարակատար դերբայ, նշան է- ածական, ժամանակն է- գոյական

6. <u>ահ</u>+ <u>եղ</u> +ա + <u>մռ</u> + <u>ունչ</u>, <u>բարձր</u>+ա+<u>թռ</u>-<u>իչ</u>, <u>հոտ</u> + <u>առ</u> + <u>ու</u>, <u>օգ</u> + <u>(ու)տ</u> + ա + <u>կար</u>

7. միջոցի, ներգործող խնդիրներ, ձևի, տեղի, հիմունքի պարագաներ, որոշիչ

Գնահատման չափանիշներ- 11- րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 8 միավոր:
   Յուրաքանչյուր կետադրական ոչ ճիշտ նշանի համար հանվում է 1 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 7 միավոր
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 8 միավոր
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր
   Եթե արմատը կամ ածանցը ընդգծված չէ, կամ էլ սխալ է ընդգծված, միավոր չի տրվում:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 3 միավոր
   Եթե խոսքի մասը սխալ է նշված, ապա միավոր չի տրվում:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
   Եթե շարահյուսական պաշտոնը սխալ է նշված ապա միավոր չի տրվում:
8. Ճիշտ պատասխանի համար 1 միավոր:
   Եթե կաղապարով տրված անդամներից անգամ մեկը բացակայում է, միավոր չի տրվում:
9. Շարադրությանը տրվում է 10 միավոր: Ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: